

Սարգիս Գ. Պետրոսյան
Պարմ. գիյր. դոկտոր

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՇԵՏԵՎԱՆՔ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ*

Բանալի բառեր– առասպելաբանություն, պաշտամունք, Սևան, գորտ, Մայր դիցուհի, Ամպրոպի աստված, «վիշապ», կարմրախայտ, ցուլ, տեղանուն, ցեղանուն:

Մուտք

Խոր նախնադարում սկիզբ առած ջրաբնակ իրական և երևակայական էակների պաշտամունքը հատուկ էր մեր նախնիներին: Դրա վերապրուկներն առկա են հայ ազգագրության բազմատեսակ նյութերում՝ մասնավորապես հեքիաթներում, առասպելներում, ավանդազրույցներում, առածներում և հանելուկներում:

Պատժված ջրահարսի մասին բազմաթիվ հեքիաթներից մեկում նա **Սաչի Սևան** է կոչվում: Անվան երկրորդ բաղադրիչով վերջինս բացահայտում է Սևանա լճի հետ իր սերտ կապը, իսկ առաջին՝ **Սաչի**, բաղադրիչով՝ իր բնույթը: Մեր կարծիքով, նա ունեցել է ***Չաչի** տեսքը, ապա ձևափոխվել է **չ-ս > ս-ս** առնմանության հետևանքով, հաջորդ՝ **Սևան** բառի ազդեցությամբ: Ընդ որում, ***Չաչի > *չաչ-ի** կազմված **չաչ** արմատից **-ի** վերջածանցով (հմմտ. **այգի, գերի, բարի, քենի, քեռի** և այլն):

Չաչ արմատն առկա է նաև **չաչք** բառում: Սրա-**ք** հոգնակիակերտով գործածության համար հմմտ. **ալք, դիք, կուք, չարք, քաքք: Չաչք** բառը ոչ միայն բացասական, այլև դրական իմաստով է օգտագործվել հմմտ. **Չաչ(չ)ագոտի//Աստծու գոտի(կ)**՝ «ծիածան»¹: **Սաչի Սևան** անվան մեջ **Սաչ/*Չաչ**-ը նույնպես դրական իմաստ է ունեցել, որովհետև 90-ամյա Եղ-սում տատի պատմած (և 1939 թ. գրի առնված) «Գորտ-աղջիկը» հեքիաթում Սաչի Սևանը կատարելապես դրական կերպար է²: Իսկ ջրահարսի՝ ժամանակավորապես գորտ դառնալու հանգամանքն ուղղակի արձագանքն է հնդեվրոպական նախնական առասպելի այն դրվագի, որում Ամպրոպի

* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.06.2018: Սույն հոդվածի համառոտ հիմնադրույթները տպագրվել են ՀՀ ԳԱԱ Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները (17-19 հոկտեմբեր, 2013)» զեկուցումներում, Եր., 2013, էջ 101:
1 **Մայխասյանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հատ. I, Եր., 1944, էջ 10:
2 Տե՛ս «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. VIII, Եր., 1977, էջ 363-366, 848:

աստվածը, դավաճանության մեջ մեղադրելով կնոջը, որպես պատիժ ընդերքային էակներ էր դարձրել թե՛ նրան, թե՛ նրա զավակներին³:

Սևանա լիճը պատկերացնելով որպես մի վիթխարի առասպելական ջրային էակ՝ մեր հեռավոր նախնիները լճի «դիմային» մասից սկիզբ առնող Հրազդան գետն էլ համարել են նրա երկար լեզուն: Դրանով է պայմանավորվել այս գետի **Զանգու** ժողովրդական անունը: Մարդու և կենդանիների մարմնամասերի անուններով տեղանունների ստեղծումը համաշխարհային երևույթ է, բայց քանի որ դրանք յուրաքանչյուր լեզվի բառապաշարում առանձին շերտ են կազմում, ուստի միշտ չէ որ այդ լեզվին բնորոշ օրինաչափությունները տարածվում են նաև նրանց վրա⁴: **Զանգու** գետանվան հիմքում մենք տեսնում ենք հ.-ե. *dǫg'hū- «լեզու» նախաձևից ծագած տարբերակ, որի երբեմնի գոյությունն հաստատվում է **զանգիկ** (<զանգ-իկ) «մակալեզու, լեզվակ»⁵ բառի միջոցով: Վերջինիս հիմք ***զանգ**-ը պետք չէ շփոթել պահլավ-պարսկական zang «զանգակ, բոժոժ» բառից փոխառյալ **զանգ**-ի հետ: Հնդեվրոպական նույն արմատից է ծագում նաև **լեզու** բառը⁶: Կարծում ենք, որ եթե հ.-ե. *dǫg'hū-ից ունենք այդքան ձևափոխված **լեզու**, ապա կարող էինք այլ հնչյունափոխությամբ ունենալ և ունեցել ենք **զանգու**: Տարբեր ուղղությամբ ընթացած հնչյունափոխությունները կարող են արդյունք լինել խոսքի օրգան լեզուն նյութեղեն լեզվից տարբերելու պահանջի (թարբուի կիրառումով)⁷: Այսպիսով, հնդեվրոպական «լեզու» նշանակող նախաձևի մի տարբերակից ունեցել ենք **լեզու**, իսկ մյուս տարբերակից՝ **զանգու** բառը: Այս վերջինն է ընկած ինչպես **զանգիկ** (<զանգ-իկ) «մակալեզու, լեզվակ» բառի, այնպես էլ **Զանգու** գետանվան հիմքում:

Սևանա լճի շրջակա տեղանունները ստեղծողների համար որպես դիտակետ է ծառայել Գեղամա լեռնաշղթայի կենտրոնական մասը հետևյալ երկու պատճառներով. 1. Այստեղ էր գտնվում Սևանի ավազանի ամենաբարձր գագաթը՝ Գեղ լեռը (ո՛չ Գեղմաղանը, այլ՝ Աժդահակը. բարձր. 3597 մ), 2. Այստեղ էր գտնվում Սևանի ավազանի բնակչության ընդհանուր նախնու՝ Հայկազն Գեղամի բուն տիրույթը: Դա ուրարտական դարաշրջանում Uelikuni//Uelikuhi կոչված երկիրն էր, որից՝ Գեղա(ր)քունիք տեղանունը⁸: Մովսես Խորենացու վկայակոչած հին հայկական ավանդազրույցի համաձայն, Գեղամ նահապետը, հաստատվելով այստեղ, «շինէ զեզր ծովակին, և թողու անդ բնակիչս. Եւ յիւր անուն և սա զլեառնն անուանէ Գեղ, և զշէսն Գեղարքունի, որով կոչի և ծովն»⁹:

Մարդկային համակարգված մտածողությանն իր ամենավաղ փուլում բնորոշ էր իրերի և երևույթների ընկալումը հակադրամիասնական զույգերի ձևով: Սևանա լճին առնչվող երևույթներում այդպիսի զույգեր կազմել են հետևյալ շարքերը. 1. «վերև»/«բարձր լեռ»/«արական սկզբունք»/ «հայր»/

3 Տե՛ս **Топоров В.**, Еще раз о балтийских и славянских названиях божьей коровки (*Coccinella septempunctata*) в перспективе основного мифа, «Балто-славянские исследования, 1980», М., 1981, с. 281-285:

4 Տե՛ս **Томашин Г.**, Топонимы как реалии языка и культуры, «Вопросы языкознания», М., 1984, N 4, с. 87:

5 **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հատ. II, Եր., 1973, էջ 79:

6 Տե՛ս նույն տեղում, էջ 272:

7 Տե՛ս նույն տեղում:

8 Տե՛ս **Капанцян Г.**, Историко-лингвистические работы, т. II, Ер., 1975, с. 80-83:

9 **Մովսիսի Խորենացու** Պատմության Հայոց (այսուհետև՝ Խորենացի), Եր., 1981, Ա, Ժբ:

«Ամպրոպի աստված»/«ցուլ» և 2. «ներքև»/ «Սևանա ծով»/ «իգական սկզբունք»/«մայր»/«Սևանի կենդանակերպ կամ անձնավորյալ ոգի»: Հմմտ. հարավային Հայաստանում Սիփան լեռ/«հայր» և Վանա ծով/«մայր» երկհակադրամիասնությունը՝ արտացոլված Հովհ. Շիրազի պոեզիայում:

Նկատել, որ ուրարտական դարաշրջանում Ամպրոպի Թեյշերա աստծու կացարան էր համարվում Սիփան լեռը¹⁰, իսկ նրա տեղական նախատիպի գուգակիցը լինելու էր Վանա լճի անձնավորումը՝ վիպական ծովինարի (<Ծովի-նար) նախատիպ դիցուհին: Ամպրոպի հայր աստծու և մայր Սևանի սերտ կապի ընթանման հետևանքով է, որ Սևանի ավազանի «վիշապ» կոչված քարակոթողներից կան այնպիսիները, որոնց վերնամասում ցուլերի գլուխներ են պատկերված¹¹, իսկ ցուլը Ամպրոպի աստծու նախատիպը լինելուց հետո համարվել է նրա սրբազան կենդանին և խորհրդանիշը: Այդպիսին էր լինելու ցուլը նաև Գեղամի կերպարի ձևավորման դեպքում, որը, վիպական դաշտ մտնելով, ավելի ուշ վերածվել էր մերձսևանյան հայկական ցեղերի ընդհանուր նախնու կերպարի: Դրան զուգընթաց հայության մերձսևանյան հատվածը կոչվել է **գեղնի/գեղնիկ** (հմմտ. «Գեղնի-հայ», «Գղնիկ-գեղնի, հայ»)՝: **Գեղ** լեռնանվան, **Գեղամ** անձնանվան, **Գեղա(ր)քունի**/Uelikuni երկրանվան նման այդ անվան հիմքում ևս *գեղ (<հ.-ե. *yel-) արմատն է նախ «մեծ», ապա «արքա, արքայական» նշանակությամբ¹³ (հմմտ. շումեր LU.GAL «մեծ մարդ» > «արքա»):



10 Ուրարտական դարաշրջանում Սիփան լեռը կոչվում էր Eritia, իսկ նրա՝ Թեյշերա/Ամպրոպի աստծուն ձոնված սրբավայր քաղաքը՝ Eridia (Дьяконов И., Ассиро-вавилонские источники по истории Урарту, այսուհետև՝ АВИИУ, “Вестник древней истории”, 1951, N 2-4, надп. N 27; Меликишвили Г., Урартские клинообразные надписи, այսուհետև՝ УКН, М., 1960, надп. N 27; Арутюнян Н., Топонимика Урарту, այսուհետև՝ ТУ, Ер., 1985, с. 259, 261):

11 Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հատ. VII, Եր., 1975, էջ 107, 166: Նախնադարյան պաշտամունքներից էր գալիս ամպրոպաբնույթ աստվածների կապը իրենց խորհրդանիշը դարձած ցուլի հետ: Դա նկատելի է հայոց ազգագրական նյութերում ևս: Օրինակ՝ «Եթե եզները վերև նայեն և հոտմտան՝ անձրև կգա», «Եթե մալը (եղջյուրավոր կենդանիներ) փռշտա՝ թիփի կլինի» (Լալայան Ե., Երկեր, հատ. I, Եր., 1983, էջ 247):

12 «Բառգիրք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Ամայանի (այսուհետև՝ «Բառգիրք հայոց»), Եր., 1975, էջ 64, 67:

13 Տե՛ս Պետրոսյան Ս., Մերձսևանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ.թ.ա. VI-VII դ.), «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1976, N 1, էջ 187-198:

1. Մայր գորտի և Ամայրոպի աստծու պաշտամունքի հետևանք տեղանունները

Սևանի ավազանի մյուս ափամերձ տարածքները անվանակոչվել են լիճ-«մոր» մարմնի նկատմամբ իրենց ունեցած դիրքին համապատասխան: Ռուսա I-ն (մ.թ.ա. 735-713 թթ.) իր արձանագրություններից մեկում հիշատակում է «Ծովից (Սևանա լճից) այս կողմ» գտնված չորս երկրներ¹⁴: Դրանցից Արկուկիուն, գտնվել է լճի հարավ-արևմտյան ափին՝ իր անվանն արմատակից անուն կրող **Արգիճի** գետի ավազանում¹⁵: Հավանաբար, Արգ-սգ-իւ- երկրանվան -իւ- վերջնամասը արտացոլում է կամ հ.-ե. *-iio վերջածանցը՝ կիրառված սեռ. հոլովի գործառնությամբ (ուղղ. հոլ. *-iia), կամ սեպագիր -իւ//հ.-ե. *-iio և սեպագր. -ia//հ.-ե. *-iia վերջավորություններով մյուս ցեղանուն-տեղանունների նման այստեղ ևս ուղղակիորեն գործ ունենք դրանց արական և իգական սեռերով հիշատակված լինելու փաստի հետ: Հայտնի է, որ երկրանունները տարբեր լեզուներում սովորաբար իգական սեռի են, իսկ ցեղանունները՝ արական: Դրանց համապատասխան գրաբարում **Ասորիք** երկրանունը հոգն. սեռ. հոլովում դառնում էր **Ասորեաց** (իգական սեռ.), իսկ նրա հետ նույնական **ասորիք** ցեղանունը՝ **ասորաց** (արական սեռ)¹⁶: Քննարկվող երկրանվան *Արգսգ- հիմքի -սգ բաղադրիչը հ.-ե. *-uk վերջածանցն է,¹⁷ իսկ *Արգ-ը՝ հ.-ե. *arq՝ «փոր, ծոց» և «աղիք» նշանակող արմատը: Այս արմատը իր առաջին նշանակությամբ առկա է **արգանդ** բառում (<արգ-անդ. հմմտ. ազգակից լեզուների բառերից կիմր. arffed «ծոց, գիրկ»), իսկ երկրորդ նշանակությամբ՝ **արգահատել** (<արգ-ահատ) բառում¹⁸: Երկրանվան մեջ հնդեվրոպական արմատը, ամենայն հավանականությամբ, կիրառված է «փոր, ծոց» իմաստով: Բնականաբար, ի նկատի է առնվել «մայր» Սևանի «փորը», «ծոցը», որին հարող ցամաքամասին էլ տրվել է Արգսգիս անունը: Այստեղով հոսող և Սևանը թափվող գետն էլ համապատասխանաբար կոչվել է **Արգիճի** (<Արգ-իճ-ի. հմմտ. -իճ վերջածանցը **լուիճ**, **կարիճ**, **կալիճ**, **ճահիճ** և այլ բառերում):

Սեպագրային **Արկիուկիու** երկրանվան և **Արգիճի** գետանվան առաջարկված ստուգաբանությունները՝ «փորի, ծոցի (երկիր, գետ)» իմաստներով, իրենց հաստատումն են գտնում նաև նույն տարածքի գյուղերից մեկի **Երանոս** և **Չագ/Չագագյուղ** անունների ստուգաբանությամբ: **Երանոս** գյուղանունը **Երանոս** անձնանունից բխեցնող տեսակետը¹⁹ քիչ հավանական է, մանավանդ որ հունարեն Եւրոնաօձ «խաղաղարար, խաղաղասեր» անձնանվանն հանգող **Երանոս** անձնանունը հնում հազվադեպ է կիրառվել²⁰, երբ պատմական Հայաստանի տարբեր շրջաններում կային **Երանոս/Երինոս/Երանոց** անուններով այլ բնակավայրեր²¹: Մերձսևանյան շրջանի

14 Տե՛ս YKH, N 266: TY, c. 37.

15 Տե՛ս **Կարագեղեան Յ.**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, I, 1, Սեպագիր տեղանուններ Արարատում և յարակից նահանգներում, Եր., 1998, էջ 158, 240:

16 Տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. III, Եր., 1957, էջ 298-299:

17 Հմմտ. **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Եր., 1987, էջ 232:

18 Տե՛ս ՀԱԲ, հատ. I, Եր., 1971, էջ 302-303:

19 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. II, Եր., 1944, էջ 135:

20 Տե՛ս նույն տեղում:

21 Տե՛ս **Հակոբյան Թ., Մելիք-Քախչյան Սո., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների

Երանոս գյուղանվան հիմքում, մեր կարծիքով՝ **երան** բառն է՝ **-ng** վերջնամասով: **Երան** նշանակում է «մեջքից մինչև բարձերը» եղած մարմնի մասը, որից **երանք** «ամորձիք», իսկ Գր. Մագիստրոսի մոտ՝ «ստամոքս»²²: Դժվար թե մեր բառը փոխառյալ լինի պահլավերեն (միջին պարսկերեն) *rān* «սրունք, բարձք» բառից, որովհետև հստակ է, որ սա ածանցավոր բառ է՝ բաղկացած **եր-** արմատից և **-ան** վերջածանցից (հմմտ. **բեր-ան**, **ծոր-ան**, **կո-ան**, **մկ-ան** և այլն): Ընդ որում, **երան** (<եր-ան) բառի **եր-** արմատը կարելի է նույնացնել **երի** (<եր-ի) բառի հետ, որը նշանակում է «կենդանու առջևի ոտների վերի մասը, լանջակողմ», **եր-** արմատի հետ՝ ծագած հ.-ե. **per-* «առջև, առաջակողմ» նախածնից²³: Իմաստաբանորեն ևս **երան**-ը ավելի մոտ է **երի** բառին, քան պահլավերեն *rān*-ին:

Երանոս գյուղանվան հիմք **երան**-ի և **երան** բառի նույնականությունը հաստատվում է նաև անվանակիր գյուղի մյուս **Ձագ/Ձագագյուղ**²⁴ անվան ստուգաբանությամբ: **Ձագ**-ը նույնն է **ձագ** բառի հետ, որը նշանակում է «այն կտորը, որ ձգում են վարտիքի կամ շավարի երկու տոտերն իրար միացնելու տեղում՝ լայնացնելու համար» կամ «առանց կտորի, լայն՝ կախ ընկած տեղը երկու տոտերի միացման տեղում»²⁵: Վերջին նշանակությամբ **ձագ**-ը մերձենում է ***երանոց**-ի նշանակությանը, հաստատելով միևնույն բնակավայրի **Երանոս** և **Ձագ/Ձագագյուղ** (<ձագ-ա-գյուղ) անունների իմաստային համարժեքությունը: **Երանոս**-ի ***երանոց** նախածնի համար հմմտ. մարմնի մասերի անուններով կազմված **թիկնոց**, **ձեռնոց**, **մատնոց** բառերը, իսկ մարմնի մասերի անուններից՝ **պարանոց** բառը:

Արկուկիու(սի) երկրից արևելք, Սևանա լճի հարավային ափի կենտրոնական հատվածը ներառյալ, գտնվում էր Գուրկումելի//Gurqumeli երկիրը: Այս երկրանունը իմաստային սերտ կապի մեջ է Սևանա լճի հարավային ափին Ռուսա I-ի կառուցած «Թեյշերա աստծու քաղաք»-ի²⁶ անվան հետ: Ուրարտուի պաշտոնական դիցարանում Թեյշերան՝ Ամպրոպի աստվածը (գաղափարագիր ⁰IM//⁰IS-KUR), երկրորդ տեղն էր զբաղեցնում դիցական գլխավոր եռյակում²⁷: Gurqumeli երկրանունը բաղկացած է Gur-qum-el(i) բաղադրիչներից, որոնցից առաջինը բնաձայն ***Գուռ** արմատն է՝ առկա նաև **Գռզո բարա** դիցանվան և **Գրզուռ** (<*գուռ-գուռ) լեռանվան մեջ: Սա սեպագիր Gurqu-ն²⁸ է: Գրզուռ լեռը՝ որպես սրբազան լեռ, իր անունն էր սովել հայոց հին տոմարի **Գրզուռ**//**Գորզոռ** կոչված օրանվանը (ամսի 21-րդ օրը), որը եղել է հայոց հնագույն Ամպրոպի աստծու պաշտամունքին ձոնված օր: Լեռնանվան **Գուռ**//**զոռ** արմատը տեսնում ենք նաև հայաստանի դիցարանի ամպրոպաբնույթ գլխավոր աստծու գաղափարագիր ^dU.GUR անվան մեջ²⁹: Այս նույն արմատը Սևանի ավազանում առկա է **Գռասար** լեռնանվան (Գեղամա լեռնաշղթայի գագաթներից, բարձր. 3181 մ) և **Գռիձոր** գետանվան

տեղանունների բառարան, հատ. II, եր., 1988, էջ 211-212:

22 ՀԱԲ, հատ. II, էջ 38:

23 Տեն նույն տեղում, էջ 54-55:

24 Տեն Ալայանյան Ա., Գրզեարյան Հ., Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, եր., 1981, էջ 68, 114:

25 ՀԲԲ, հատ. III, եր., 1944, էջ 155:

26 Տեն ԿԿԽ, N 266:

27 Տեն Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, եր., 1990, էջ 41-42:

28 Տեն ԿԿԽ, 127, V:

29 Տեն Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, եր., 2006, էջ 154-159:

(Գավառագետի ձախ օժանդակը)³⁰ անուններում:

Նույն բնածայնական արմատն է առկա **գոգոսալ** (<*գուո-գուո) բառում, որը նշանակում է «ագոսավի, փորի, ամպի, կրակի, կառքի ձայն»³¹, **Գրգուո** լեռնանվան, նրա կրկնորդ **Գուոգուո**-ի և Սիփան լեռան մեկ ուրիշ անվան՝ **Գոռոզ**-ի մեջ³²: Ընդ որում, **գուո**//**գոռ** (հմմտ. **գոռոչ**<**գոռ**-ոչ), իսկ **Գոռոզ** լեռանվան **-ոզ** բաղադրիչի համար հմմտ. **լոլոզ, կոկոզ, ձոլոզ, պոլոզ** և այլ բարբառային բառերի համապատասխան վերջածանցները: **Գոռ** բնածայն արմատի նշանակություններն են «գոչյուն, բղավոց», «կռիվ, պատերազմ», «խրոխտ, սարսափելի», իսկ նրա ածանցյալ **գոռոզ**-ը՝ «խրոխտ, հպարտ», «բռնակալ», «թագավոր, կայսր», «սատանա» է նշանակում³³: Բառիմաստի այսպիսի բազմազանությունը բնորոշ էր ամպրոպային երևույթների, դրանց մարմնավորում բարձր լեռանը և դրանց անձնավորում Ամպրոպի աստծուն, մանավանդ, երբ վերջինս հանդես էր գալիս դիցարանի գլուխ կանգնած աստծու դերում³⁴: Հասկանալի է՝ դրանց հենքը՝ բարձր լեռների գագաթները, ամպրոպային երևույթների օջախներ են, իսկ այդպիսի լեռան ոգեղեն պատկերացումը ծնել է **Գոգո** բաբայի և Ամպրոպի աստծու առասպելաբանական կերպարները: Ըստ երևույթին, Արագածին առնչված այդպիսի մի կերպարի հիշատակն է պահպանել Թալիսի շրջանի՝ հետագայում լքված, **Գրգոր**³⁵ գյուղի անունը:

Gur-gum-el(i) երկրանվան երկրորդ՝ gum-/-kum-, բաղադրիչը կարող էր «սուրբ» նշանակել, որովհետև, ինչպես Մ. Աբեղյանն է գրում, «անձրև հղողը կամ **Գոգո բաբան** բարձունքներում է բնակվում... Լեռնային շատ բարձունքներ Հայաստանում ևս, հավանաբար իբրև **որոտացողի** և **անձրև** շնորհողի նստավայր, **սուրբ** են համարվել (ընդգծումները մերն են – Ս.Պ.)³⁶: Հնդեվրոպական ծագումով նույն *gum-/*kum- բաղադրիչն առկա է նաև Թեյշեբա աստծու պաշտամունքային կենտրոններից մեկի Qumeniu³⁷ անվան մեջ: Հմմտ. հ.-ե. *kom- «ծիսական գործողություն կատարել» և *keum-/*koum-/*kum- «մաքուր», որից լուվ. kuma «մաքուր», լյուկ-միլ. kuma- «(ծիսականորեն) մաքուր», հին հնդկ. kumāra «երեխա, պատանի»³⁸ և անհայտ ծագումով համարված ասուր. kamirum «քուրմ», kumirtu «քրմուհի», ասոր. kūmrā, եբր. kōmer «քահանա»³⁹: Gur-gum-el(i) երկրանվան երրորդ բաղադրիչը հ.-ե. *-elo/*-ilo վերջածանցն է՝ հայերենում արտացոլված **-ել**/**-եղ**, **-իլ**/**-իղ** տեսքով. հմմտ. **արգել, բորեղ, խնծիղ, մաթիլ, տորմիղ** և այլ բառերի վերջածանցները⁴⁰: Ասվածը հիմք է տալիս Gurqumeli երկրանունը ստուգաբանել «Որոտացող սրբազան (լեռ, աստվածություն)» ձևով: Ըստ երևույթին, նկատի է առնվել ներկայիս Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի սահմանագլխին գտնվող Վարդենիսի լեռնաշղթան և սրա ամենաբարձր նույնա-

30 Տես Ասլանյան Ա., Գրգեարյան Հ., նշվ. աշխ., էջ 58:

31 ՀԱԲ, հատ. I, էջ 600:

32 Տես Սրվանձաթյանց Գ., Երկեր, հատ. I, Եր., 1978, էջ 34, 49, 53, 72:

33 Տես ՀԱԲ, հատ. I, էջ 581:

34 Տես Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 153-154:

35 Տես Ասլանյան Ա., Գրգեարյան Հ., նշվ. աշխ., էջ 58:

36 Տես Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 78:

37 Տես ТУ, с. 120, Հնայակյան Ս., նշվ. աշխ., էջ 41:

38 “Вестник древней истории”, 1980, N 2, с. 14-18.

39 ՀԱԲ, հատ. IV, Եր., 1979, էջ 596.

40 Տես ՀԼՊՆԺ, էջ 233:

նունն գազաթն անձնավորած աստվածությունը (Վարդենիս գազաթի բարձրությունը 3522մ)⁴¹:

Մրա առնչությամբ նշենք, որ Սևանի հարավային ափի «Թեյշերա աստու քաղաք»-ի վայրում է գտնվել ավելի վաղ հիշատակված Թուլիխու քաղաքը, որի անունով շրջակա երկիրը, այսինքն՝ Գուրկունեղին, կոչվել է «Թուլիխու քաղաքի երկիր» (^{URU}Tulihui KUR-ni):⁴² Իսկ քաղաքին իր անունը տված Թուլիխուն (հայ. ***Թուղխ**) ձկնամարդ աստվածություն էր, որին էին ձոնված Սևանի ավազանի և շրջակայքի «վիշապ» կոչված ձկնակերպ քարակոթողները⁴³: Այդ աստվածության պաշտամունքի արգասիքն է նաև Սևանա լճի հյուսիս-արևելքում գտնվող թերակղզու, նրա լեռան, լճի, այստեղով անցնող և Սևանա լիճը թափվող գետակի, գետակն ընդունող ծոցի և մոտակա գյուղի **Արտանիշ** անունը: Կարծում ենք, որ այս տեղանվան իմաստը Սևանա լճին և նրա մեջ թափվող գետակներին բնորոշ ձկնատեսակի **կարմրախայտ** անվան համարժեքն է՝ նույնական **արտակէտ** բառի հետ: Վերջինս համարել են «անստույգ բառ» իրեն տրված տարբեր բացատրությունների (որոնցից մեկն էլ «կարմրախայտ»-ն է) պատճառով⁴⁴: **Արտ-ա-կէտ** նշանակում է նույնը, ինչ և **կարմրախայտ**-ը, այսինքն՝ «կարմիր կետեր ունեցող (ձուկ)»//«կարմիր խայտեր ունեցող (ձուկ)»: Նույնն է նշանակել նաև իր առաջին բաղադրիչով **արտ-ա-կետ** բառին հարող **Արտ-ա-նիշ** տեղանունը: Մրա **-նիշ** բաղադրիչը նույնն է **նիշ** բառի հետ, որը նշանակում է «կետ, նշան, հետք» և համարվում է պահլավերենից կամ ասորերենից փոխառյալ բառ⁴⁵: Եթե անգամ սա հայերենի բնիկ բառերից չէ, համենայն դեպս շատ հին փոխառություն է, որովհետև **Արտանիշ** տեղանվան մեջ բարդվել է հնդեվրոպական ծագում ունեցող և գրեթե մոռացված *արուս (*>*արտ-, շեշտագուրկ **ու** ձայնավորի սղումով) արմատի հետ:

2. Կարմրախայտ ձկան պաշտամունքի հետևանք տեղանունները

Հնդեվրոպական նախալեզուն ուներ *rud^(h)-/*reud^(h) «կարմիր մետաղ», «պղինձ», «կարմիր (գույն)» նշանակող արմատը. հմմտ. լատին. raudus, հոգն. rūdera «պղնձի կտոր», հին հնդկ. rudhirá-, թոխար. Բ ratre, Ա rtār, հուն. հոմեր. ἐρυθρός, լատին. ruber, հին իռլ. rúad, հին իսլ. rjóðr/rauðr, հրգ. rōt, լիտվ. raūdas, հին պավ. Рудъ՝ բոլորը «կարմիր» և այլն, որոնց և շումեր. urudu «պղինձ» բառի կապն ակնհայտ է (հայերենի նման r-ից առաջ շումերենն ունի «ավելորդ» ձայնավոր)⁴⁶: Վերջինի աղբյուրը համարվում է հնդեվրոպական նախալեզուն⁴⁷: Հայերենում *արուտ տեսքով այս արմատի

41 Տե՛ս Ալանյան Ա., Գրգեարյան Հ., նշվ. աշխ., էջ 185:

42 Տե՛ս ԿԿԻ, N 160.

43 Տե՛ս Պետրոսյան Ս., Գեղամի, Սիսակի և Վեդուրի-Էթիունի ցեղախմբի պաշտամունքի մասին, «Հայկագուրիներ», ՀՀ ԳԱԱ, ԵՊԻ, Եր., 2013, էջ 148-152: Թուլիխու-ն սեպագրային գրանցումն է հայերեն *թուղխ բառի. որն իր արմատակից թուղք (>թուխպ) բառից տարբերվում է միայն ածական բաղաձայնով. թուղ-խ և թուղ-ք: Վերջինս նշանակում է «ամպ, մշուշ, մառախուղ» և ստուգաբանության չարժանացած բառ է (ՀԱԲ, հատ. II, էջ 205): Հմմտ. Թուխ-մանուկ-Թուղխ-մանուկ:

44 Տե՛ս ՀԱԲ, հատ. I, էջ 342:

45 Տե՛ս ՀԱԲ, հատ. III, Եր., 1977, էջ 452:

46 Տե՛ս Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, т. II, М., 1984, с. 712.

47 Տե՛ս նույն տեղում:

երբեմնի գոյության առթիվ նկատենք, որ, ինչպես Հ. Աճառյանն է նշում. «Շատ լեզուներում պատահում են երբեմն արմատներ, որոնք այլուր կորած են և միայն մի որևէ բարդության կամ ածանցման մեջ պահված են լինում»⁴⁸: **Արտանիշ** տեղանունից և **արտակէրտ** բառից բացի, ***արուտ**-շեշտազուրկ **արտ**- արմատը պահպանված է նաև **արտաշէկ** (<*արուտ-ա-շէկ, որից **արտաշիկանալ** և **արտաշիկագոյն**) բառում: Միջնադարյան «Բառգիրք հայոց»-ի «**Արտագոյն**- բացագոյն» բառը⁴⁹ ևս նույն ***արուտ**->**արտ**-արմատն է պարունակում, բայց «բացագոյն»-ի փոխարեն «բոցագոյն» ուղղումը նրա համար ենթադրում է «բոց» իմաստը. հմնտ. նույն բառարանի «**Արտաշիկագոյն**-հրացեալ երկաթ» բառը⁵⁰:

Գոյություն ունեցող կարծիքի համաձայն՝ **արտաշէկ**-ը ***ատրաշէկ** բառի դրափոխության ենթարկված ձևն է⁵¹, որովհետև իբր նրա **արտ**- բաղադրիչը իրանական լեզուների atur «կրակ» բառն է⁵²: Բայց բանն այն է, որ իրանական այս բառը հայերենում որպես առանձին արմատ գոյություն չունի, որպեսզի բառաբարդում ստացվեր հայերեն **շէկ** բառի հետ (այն առկա է միայն իրանական բարդ և ածանցավոր փոխառությունների մեջ)⁵³ և բառին տար «հրաշէկ» նշանակությունը: **Արտաշէկ** բարդ բառի մեջ ***արուտ** «կարմիր» արմատի ներկայությունը բառին տալիս է «կարմրաշէկ» հասկանալի նշանակությունը: Որ **արտաշէկ**-ում **արտ** (<*արուտ) բաղադրիչը գույնի անուն է, ցույց է տալիս նախ Զաքարիա կաթողիկոսի երկից «Նոր հայկազեան բառարանում» կատարված մեջբերումը: Ահա այն. «Ի հրոյն **արտաշիկանան**, և **զգոյն** և զտիպ հրոյն առնուն: **Սեա** և ցուրտ է երկաթ, և ի քուրայ մտանէ, **արտաշիկացեալ** ջերմային հրովն» (ընդգծումները մերն են-Ս.Պ.)⁵⁴: Ինչպես տեսնում ենք, հակադրված են նույն երկաթի գույները (մի դեպքում) և հատկությունները (մյուս դեպքում). քուրա մտնելուց առաջ երկաթը **սեա** և **ցուրտ** է, մտնելուց հետո՝ **արտաշիկացեալ** է և **ջերմային**: Ի դեպ, **արտաշիկագոյն** բառը ՆՀԲ-ի հեղինակները բացատրում են նաև «կաս **կարմիր**՝ կրակ կտրած» բառերով⁵⁵: Այսպիսով, **Արտանիշ** գետակի, ծոցի, թերակղզու և այլն անունը առնչվելով Սևանա լճին, իրավամբ, կարող էր «կարմրախայտ» նշանակել՝ որպես արգասիք տեղում այդպիսի ձկան և ձկնամարդու հնագույն պաշտամունքի: Ի դեպ, այդ պաշտամունքի հետքերը նկատելի են թե հայ ժողովրդական հեքիաթներում⁵⁶ և թե Վարդգես Մանուկի մասին հին հայկական ավանդազրույցում⁵⁷:

Կարմրախայտ ձկան և ձկնամարդու պաշտամունքին տրված տուրք պետք է համարել նաև Սարդուրի II-ի (մ.թ.ա. 764-735 թթ.) կողմից հիշատակված Վելիկունիի արքա Murinu-ի⁵⁸ և Աբիլիանիի (հետագա Աբեղեանքը)

48 ՀԱԲ, հատ. III, էջ 117.

49 Տես «Բառգիրք հայոց», էջ 40:

50 Տես նույն տեղում, էջ 41:

51 Տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. I, եր., 1979, էջ 378, ՀԱԲ, հատ. I, էջ 342:

52 Տես ՀԱԲ, հատ. I, էջ 289:

53 Հմնտ. **ատրագոյն**, **ատրձանակ**, **ատրուշան** բառերի ամբողջությամբ իրանական կազմություններ լինելու իրողությունը (ՀԱԲ, հատ. I, էջ 289-291):

54 Տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. I, էջ 378:

55 Տես նույն տեղում:

56 Տես «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. VI, եր., 1973, էջ 282-284, 303-308, 466-470, 620-622 և այլն:

57 Տես **Պետրոսյան Ս.**, Պատմական ու առասպելաբանականը Վարդգես Մանուկի ավանդազրույցում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հատ. XV, եր., 2013, էջ 27-31:

58 Տես YKH, N 156 D1.

արքա Murini-ի⁵⁹ անունները, որոնք կազմված են mur-//*mor- արմատից -ini//–ին վերջածանցով: Վերջինը հայերենի հանրահայտ վերջածանցներից է՝ առկա **ամուսին**, **դարբին**, **Լուսին**, **ներքին** և այլ բառերում: Նույն արմատից –ենի վերջածանցով կազմված բառ է **մորենի**-ն (ո՛չ հատապտղի անունը): **Մորենի** (<մոր–ենի) նշանակում է «մորթային մի հիվանդություն, որի ժամանակ մարմնի վրա տեղ–տեղ կարմիր նշաններ են երևում, որ բժշկում են մորենու ձյուղերով»⁶⁰:

Բացատրության վերջնամասը հավելվել է հատապտղի անվան հետ հիվանդության անվան ունեցած նմանահնչունության պատճառով: Կարևորն այն է, որ հիվանդությունը **մորենի** է կոչվել: Պատճառը լինելու էր մարդու մարմնին «տեղ–տեղ կարմիր նշաններ» առաջացնելը, այլ կերպ ասած՝ մաշկը կարմրախայտ դարձնելը: Ստ. Մալխայանցը այս հիվանդության անվան հետ է համեմատում փոքր երեխաների հիվանդության **մորմնիկ** անունը⁶¹: Սա բարդ ածանցավոր բառ է՝ բաղկացած **մոր–մն–իկ** <***մոր–մուն–իկ** բաղադրիչներից: Սրանցից **–իկ**-ը հայտնի փոքրացուցիչ վերջածանցն է, իսկ **–մուն**-ը (շեշտազրկված՝ **–մն–**) «կաշու վրա դուրս տված մուգ գույնի բծեր, պեպեն, ցան» է նշանակում⁶² (հմնտ. **մնտտ** «երեսին մուն ունեցող»)⁶³: Murinu/Murini անվան նման «կարմրախայտ» են նշանակում և Սևանի ու նրա ընդունած գետակների կարմրախայտ ձկանն են վերաբերում, ինչպես վերևում տեսանք, նաև **Արտանիշ** տեղանունը, իսկ վերոհիշյալ հիվանդությունների անունները ևս «կարմրախայտ» նշանակելով հանդերձ, վերաբերում են ոչ թե ձկանը, այլ մարդուն (բացառված չէ, որ դրանցից երկրորդը **կարմրուկ** կոչված մանկական հիվանդության մեկ ուրիշ անունն է):

Սևանա լճի հյուսիսային ափերը գտնվում էին Լիկիու երկրի կազմում՝ տեղորոշված Արախունի և Իշտիկունի երկրների միջև⁶⁴: ^{KUR}Liqiu տեղանվան արմատը հայերեն **լիկ** «լիճ, ավազան» բառն է՝ ծագած հ.–ե. *lig- կամ *leig- նախաձևից: Նրանցից են ծագում «ճահիճ» իմաստով լիտ. liūgas, հին սլավ. luža, իյուր. luga, ալբան– legate բառերը⁶⁵: Liqiu երկրանվանը մեր տված «լճային» ստուգաբանությունը հիմնավորված է ցեղային այս երկրի մերձլճյա դիրքով և հայերենում **լիկ** «լիճ» բառի (և իր **լիճ** տարբերակի) գոյությամբ: Սրանից բացի հնդեվրոպական ստուգաբանություն ունի նաև լճին՝ որպես ջրային տարերք, առնչվող Lueruhi(ni)⁶⁶ երկրանունը: Սրա բաղադրիչներն են *Lu-er-uh-, որոնցից առաջինը նույնն է հայերեն **լուալ** «լվալ, ջրով մաքրել» բայի **լու** արմատի հետ, որի հին իմաստներից «լողալ»-ն ու «նավարկել»-ը կորսված է հայերենում, բայց կա ազգակից լեզուների այնպիսի բառերում, ինչպիսիք են հ.–ե. *pleu-/*plu արմատից ծագած հուն. πλέω, հին հնդկ. plávate «նավել, լողալ», հին սլավ. plova «հոսել, նավել», plaví «նավ», թոխ. plew «նավ»⁶⁷: Բնական է, որ Հայկական լեռնաշխարհի

59 Տե՛ս YKH, N 155 C.

60 ՀԲԲ, հատ. III, եր., 1944, էջ 359:

61 Տե՛ս ՀԲԲ, հատ. III, էջ 360:

62 Տե՛ս ՀԲԲ, հատ. III, էջ 363:

63 ՀԲԲ, հատ. III, էջ 348:

64 Տե՛ս YKH, N 155 A, N 134; TY, էջ. 126-127.

65 Տե՛ս ՀԱԲ, հատ. II, էջ 281:

66 Տե՛ս YKH, N 155 D, N 155 F.

67 ՀԱԲ, հատ. II, էջ 300:

հյուսիս-արևելյան կեսի ամենամեծ ջրային ավազանի փին գոյություն ունենար այդիմաստ մի տեղանուն: Տեղանվան երկրորդ՝ -er-, բաղադրիչը հավանաբար հակադրություններ նշող հ.-ե. *-er վերջածանցն է (ջրային տարերքի վրայով շարժում՝ ի հակադրություն ցամաքային շարժման) կամ *-ero/*-ro ածականներ ու գոյականներ կազմող վերջածանցը⁶⁸ (այս դեպքում «լողորդ, նավորդ» նշանակությամբ): Lu-er-uh- տեղանվան նախնական իմաստը «լողորդներ, նավորդներ» է եղել (եթե -uh-ն այստեղ հայ. -ոյք-ի համարժեքն է)՝ հետագայում ըմբռնված որպես երկրանուն. հմմտ. **Հայք, Վիրք, Տայք, Մոկք** և այլն:

Սևանա լճի հյուսիսարևմտյան փն զբաղեցրած, Վելիկունի և Լիկիու երկրների միջև գտնվում էր Ադախու(նի) երկիրը⁶⁹: Սա, զբաղեցնելով Իշտիկունի երկրի (լճի հյուսիսարևելյան փին) դեմ դիմացի փիր, իր անվամբ իմաստաբանական հակադրամիասնության մեջ է նրա անվան հետ: Անվան մեջ -նի-ն ուրարտական սեպագրության լեզվի հավելումն է, ուղիղ ձևը **Ադախու**/***Ադախ** է եղել⁷⁰: Ad-ah- բաղադրիչներով կազմված երկրանվան -ah- բաղադրիչը «ջուր» է նշանակում՝ նույնական լինելով հայկական **Ախուրեան**⁷¹, **Անձախ** (Անձախի ձոր), **Ծանախ** (Ծանախոյ ձոր) և Հունաստանի պելասգյան ծագմամբ **Ἀχέρων, Ἀχέλης, Ἀχελῷος** գետանունների **Ախ**-, **-ախ**, **Աչ**- բաղադրիչների հետ՝ ծագած հ.-ե. *ak^u- «ջուր, գետ» արմատից⁷²: Ad-ah- (ni) երկրանվան Ad- բաղադրիչը կարելի է բխեցնել հ.-ե. *sādh- «ուղիղ, ուղիղ դիմացը» արմատից, որի ածանցյալ *sādh-i-jo նախածինից է ծագում հայերեն **աջ** բառը: Հ.-ե. *sādh- կամ *sadh- անցումը հայերենում օրինաչափ է: Ազգակից լեզուների արմատակից բառերից են հին հնդկ. sādhi «ուղիղ, կանոնավոր, լավ», հուն. ἴσθι «ուղիղ գծով գնացող, ուղիղ» և այլն⁷³: «Ուղիղ» իմաստից «աջ» իմաստին անցման տեսանկյունից հմմտ. լատին. directus «ուղիղ» > ֆր. droit «աջ», պարս. rast «ուղիղ» և «աջ»⁷⁴: Հ.-ե. *sādh-/*sadh-ից ծագած հայ. **աղ** «ուղիղ դիմացը» արմատն ու նրան միացած ***ախ** «ջուր» բառը **Ադախու(նի)** երկրանվանը տվել է «ջրի ուղիղ դիմացը» նշանակությունը: Իսկ դա Սևանի դիմացն էր՝ դիմային մասի առջևում:

Արգիշտի I-ի (մ.թ.ա. 786-764 թթ.) Լճաշենի արձանագրության համաձայն՝ Ադախու(նի) երկրի դիմաց՝ լճից հյուսիս-արևելք, գտնվում էր Իշտիկունիու երկիրը՝ «Իշտիկունիու քաղաքի երկիրը» (URU)štikuniu KUR-ni)⁷⁵: **Արկուկիու(նի)** և **Ադախու(նի)** երկրանունների պարունակած «առջև, առաջ-նամաս» և «ուղիղ դիմացը» իմաստներն, արդեն հուշում են, որ մայր ըմբռնված Սևանի հակադիր փերին կարող էին լինել «հետև, մեջք» իմաստները պարունակող երկրանունները: Išt-ik-un-iu բաղադրիչներից բաղկացած

68 Տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. III, էջ 110:
 69 Տե՛ս YKH, 155 F, 226, TY, c. 12.
 70 Տե՛ս **Կարագեոզեան Յ.**, նշվ. աշխ., էջ 160, 333:
 71 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 97:
 72 Տե՛ս **Պետրոսյան Ա., Պետրոսյան Ծ., Պետրոսյան Լ.**, «Ջրերի գավակի» պաշտամունքի արտացոլումը սեպագրային մի քանի տեղանուններում, ՀՀ ԳԱԱ ՇՀԸ կենտրոնի «Գիտ. աշխ.», I, Գյումրի, 1998, էջ 77-79: Հնագույն հայերեն ***ախ** «գետ, ջուր» արմատի թրակա-պելասգյան զուգահեռները տե՛ս **Георгиев В.**, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, с. 94, 130, 134, 263, 271:
 73 Տե՛ս ՀԱԲ, հատ. I, էջ 245:
 74 Նույն տեղում, էջ 246:
 75 Տե՛ս YKH, надп. N 134, TY, с. 96.

երկրանվան -ik- և -un- բաղադրիչները, մեր կարծիքով, նույնական են հայերենի հնդեվրոպական ծագումով **-իկ** և **-ուն** վերջածանցների հետ⁷⁶: Երկրանվան -iu բաղադրիչը բառի սեռական հոլովի վերջավորությունն է (ուղղ. հոլ. ia<h.-ե. *-(i)ia>հայ. **ի**)⁷⁷, իսկ Ist- արմատը սեպագրային արտացոլումն է **բստ** բառի: **Ըստ** նախդիրը նշանակում է «համեմատ, նայելով մի բանից այն կողմ՝ անդր քան, ավելի» և ծագում է հ.-ե. *posti նախածնից⁷⁸: Ազգակից լեզուների նույնարմատ բառերից են. հին հնդկ. paçā «հետևի», լիտվ. paskui «հետո» և այլն⁷⁹:

Սևանա լճի «հետևի» մասում բնակվում էր լճի հարավարևելյան ափը բռնած Kamanu ցեղը⁸⁰: Ըստ Հ. Կարազյոզյանի՝ **Քամանիո** հնչած ցեղանունը հայերեն սեռական հոլովով արտացոլում է ***Քաման** հիմքը (ուղղ. հոլ. ***Քամանիա**)⁸¹: Իսկ այս հիմքը տեղանուն է՝ կազմված հայերեն ***քամ** արմատից **-ան** տեղանվանակերտ վերջածանցով հմմտ. **Աղուեր-ան, Գերջ-ան, Երևան, Թմ-ան** և այլն: Տեղանվան ***Քաման** ձևից ունեցել ենք ***քամանացի** ցեղանունը՝ Մովսես Խորենացու կողմից ընկալված **քանանացի** (նաև քանանացիների անվանադիր նախնու **Քամ** անվան ազդեցությամբ)⁸²: Ըստ այսմ, մեր Պատմահայրը Սևանի ավազանի բնակիչ հայ մարտիկների կոչում է «ծովեզերեայս մանկունս, որք ի Գեղամայ և ի Քանանացուց»⁸³: ***Քաման** տեղանվան **քամ**- բաղադրիչը ծագում է հ.-ե. *kam- արմատից, որից է նաև **քամակ** (<*քամ-ակ) «թիկնամեջ, կոնակ» բառի **քամ** արմատը (արմատի ազգակիցներից հմմտ. լատիշ. kamisis, պրուս. caymoys «թիկունք, ուս», ածանցի համար՝ **գանձ-ակ, գալ-ակ, կոն-ակ**)⁸⁴: Ուրեմն Սևանի հարավ-արևելյան ափն զբաղեցրած ***Քաման** երկիրը, որից՝ նրա բնակիչների ***Քամանիո**-**Քամանիու** ցեղանունը, այդպես է կոչվել, որովհետև զբաղեցրել է առասպելաբանված Սևանի հետևի մասի (արևելյան ափի) ստորին կողմին հարող տարածքը:

Նույնպիսի մոտեցում է դրսևորվել նաև Սևանա լճի նույն՝ հարավ-արևելյան ափի երկարությամբ ձգվող Սևանի լեռնաշղթայի նկատմամբ, որը լճի արևմտյան//«դիմացի» ափից դիտված ընկալվել է որպես առասպելական լիճ-էակի մեջքը: Սևանի լեռնաշղթան հնում **Քաշաթաղ** անունն է կրել (այստեղից էլ նրա աղավաղյալ-վերիմաստավորված թրք. **Շահդաղ** անունը), իսկ այժմ այդպես կոչվում է նրա ամենաբարձր գագաթը (ավելի քան 2900մ)⁸⁵ : **Քաշաթաղ լեռնանունը** բաղկացած է **Քաշ-ա-թաղ** բաղադրիչներից: Սրանցից առաջինը **Քաշ**-ը, հայերեն **քաշ** բառն է, որն իր զուգահեռ արմատակիցներն ունի իրանական լեզուներում և հին հնդկերենում, բայց միայն հայերենում է «մեջք» նշանակում⁸⁶: Երկրորդ բաղադրիչը հայերենի **ա** հոդակապն է, իսկ **թաղ** նշանակում է «պատի կամարածն շարված

76 Հմմտ. ՀԼՊՆԺ, էջ 232, 234, 356:
 77 Տե՛ս նույն տեղում, էջ 231, **Կարազեոզեան Յ.**, նշվ. աշխ., էջ 125:
 78 Տե՛ս ՀԱԲ, հատ. II, էջ 133:
 79 Տե՛ս նույն տեղում:
 80 Տե՛ս ԿԿԻ, N 155 D; TY, c. 100-101.
 81 Տե՛ս **Կարազեոզեան Յ.**, նշվ. աշխ., էջ 214:
 82 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Սարդուրի II-ի անդրևանայան արշավանքի երթուղու շուրջ, «ՊԲՀ», 1984, N 2, էջ 177:
 83 **Խորենացի**, Բ, դ:
 84 Տե՛ս ՀԱԲ, հատ. IV, էջ 548:
 85 Տե՛ս **Ասլանյան Ա., Գրգեարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 198:
 86 Տե՛ս ՀԱԲ, հատ. IV, էջ 553:

մասը»⁸⁷: Եթե ի նկատի առնենք հին հայերենի մտածողությանը բնորոշ «պատ» և «լեռնաշղթա» հասկացությունների զուգադրումը⁸⁸, ապա պարզ կդառնա, որ Սևանի լեռնաշղթայի **Քաշաթաղ** անվան բուն իմաստը «մեջք՝ կամարաձև պատ»// «մեջք՝ կամարաձև լեռնաշղթա» է⁸⁹:

Բերված նյութը և դրան մեր տված մեկնաբանություններն ու ստուգաբանությունները մղում են հետևյալ **եզրակացության**: Սևանի ավազանի և հարակից տարածքի վեդուրիէթիոնյան առասպելաբանության (մասնավորապես Սևանա լճի պաշտամունքի) հենքի վրա ստեղծված հնդեվրոպական-հայկական ծագումով տեղանունները ապացուցում են, որ ուրարտական նվաճումներին նախորդած դարաշրջանում ևս տեղի բնակչությունը հայախոս է եղել՝ մասն է կազմել հնդեվրոպական ծագումով հայկական էթնոսի:

Սարգիս Գ. Պետրոսյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, Հայկական լեռնաշխարհում դասերի առաջացման խնդիրները, հայ և հնդեվրոպական մյուս ժողովուրդների հնագույն պատմությանը, բանահյուսությանը, մասնավորապես առասպելաբանությանը վերաբերող հարցերը:

Summary

THE CULT OF THE LAKE SEVAN AND TOPONYMS SEQUEL OF IT

Sargis G. Petrosyan

Key words – mythology, cult, Sevan, frog, Mother goddess, Thunder god, “vishap” (“dragon”), trout, bull, toponym, ethnonym.

The cult of the Lake Sevan is closely in touch with the worship of Water because in mythological imagines of the Armenians’ ancestor sliving in the regions surrounding Sevan, this lake was perceived as a mythical a quatic creature having the form of a huge creature. At the same time the river Hrazdan, that starts from the Lake Sevan, is perceived as that mythical creature’s long tongue. Accordingly river’s popular name **Zangum** means “tongue”: compared with arm. **zangik** “epiglottis, clapper” (<I.-E. *dʰǵh₂). In Sevan’s basin Urartian there are cuneiform records certifying toponyms of Indo-European etymology as Arququ(ni),-Ištikuniu, Kamaniu, Adaḫu(ni), Liqiu, Lueru(ḫi), Gurqumeli, Tuliḫu. In the Lake Sevan’s basin there are “vishap” obelisks some of which are fishlike and some are bull like. The

87 ՀԲԲ, հատ. II, Եր., 1944, էջ 78: Այս **թաղ** արմատն առկա է նաև **թաղայ** (<թաղ-այ) «պատուհան, պատրիան» շինության ներսի կողմից պատի մեջ փոս թողնված տեղ՝ զանազան իրեր պահելու համար» բառում (ՀԲԲ, հատ. II, էջ 72-73):

88 Տե՛ս **Պետրոսյան Ս.**, Հայ-շումերական առասպելաբանական աղերսների շուրջ, ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտ. աշխ.», XIV, Եր., 2011, էջ 5-6, ծան. 6:

89 Եթե երկիրը, նահանգը, գավառը որպես տուն էր ըմբռնվում (հմտտ. **Հայոց տուն, Տուն Կաղմեայ, Ասգեղտուն, Նիգատուն**), իսկ դրան շրջապատող լեռնաշղթաների լեռնանցքները՝ դռներ (հմտտ. **Հայոց դրունք, Կասպիական դրունք, Ալանաց դուն**), ուրեմն, այդ լեռնաշղթաներն էլ որպես տան պատեր էին ըմբռնվելու:

first ones are related to the mythological "Trout" worship and the second ones - to the worship of God of Thunder. Gelam, that was the eponym of the ancient Sevan basin's tribes was also the personification of the mouth Gel (Գէլ. "big, large" < I.-E. *ǵel-). His mythological prototype was the local tribes' God of Thunder (compare with Urart. Teišeba).

Резюме

КУЛЬТ ОЗЕРА СЕВАН И ЕГО РЕЗУЛЬТАТЫ-ТОПОНИМЫ

Саргис Г. Петросян

Ключевые слова - мифология, культ, Севан, лягушка, Богиня Мать, бог громовежнец, "вишاپ" ("дракон"), форель, бык, топоним, этноним.

Культ озера Севан неразлучно связан с культом воды, так как присеванские предки армян в своих мифологических представлениях воспринимали озеро как грандиозное мифическое водяное существо. Одновременно, реку Раздан они воспринимали как длинный язык этого воображаемого существа. Поэтому эта река в народе называется **Зангу**. Этот потамоним, по нашему мнению, происходит от и.-е. *dǵh₂u "язык" (ср. арм. **зангик** "язычок"). В клинописных надписях урартского периода страна у юго-западного берега озера называлась **Аркукину(ни)**, напротив этой страны, у юго-восточного угла озера, находилась страна по имени **Каманиу**, северо-западнее озера находилась страна по имени **Адаху(ни)**, а напротив этой страны, северо-восточнее озера, находилась страна **Иштикуниу**. В основном индоевропейско-армянского происхождения не только эти хоронимы. Индоевропейскую этимологию имеют также присеванские хоронимы **Гуркумели**, **Лику**, **Луэру(хи)** и **Тулиху**. В бассейне озера Севан до сих пор существуют стелы - "вишапы", одна часть которых имеет вид рыбы, а другая часть изображает быка. Первая связана с культом фореля, а вторая - с культом бога громовежнца. Для эпического образа Гегам - эпонима присеванских племен, прототипом являлся именно местный бог громовежнец (ср. урарт. Тейшеба) - персонификация горы Гел (др.-арм. գէլ "большой" < и.-е. *ǵel-).

REFERENCES

1. **Malkhasyants S.**, Hayeren batsatranakan bararan , vol. I, Yer. 1944, p. 10 (**In Armenian**).
2. "Hay zhoghovrdakan heqiatner", vol. VIII, Yer., 1977 (**In Armenian**).
3. **Toporov V.**, Yeshcho raz o baltiyskikh i slavyanskikh nazvaniyakh bozhey korovki (Coccinella septempunctata) v perspektive osnovnogo mifa// "Balto-slavyanskie issledovaniya 1980", M., 1981 (**In Russian**).
4. **Tomakhin G.**, Toponimi kak realii yazika i kulturi// Voprosi yazikoznaniya, 1984 (**In Russian**).
5. **Acharyan H.**, Hayeren armatakan bararan, vol. II, Yer. 1973 (**In Armenian**).
6. **Kapantsyan G.**, Istoriko-lingvisticheskie raboty, vol. II, Yer., 1975 (**In Russian**).
7. **Movsisi Khorneatsvo** Patmutivn Hayots, Yer., 1981 (**In Armenian**).
8. **Dyakonov I.**, Assiro-vavilonskie istochniki po istorii Urartu, "Vestnik drevney

- istorii”, 1951, N 2–4 **(In Russian)**.
9. **Melikishvili G.**, Urartskie klinoobraznie nadpisi, M., 1960 **(In Russian)**.
 10. **Arutyunyan N.**, Toponimika Urartu, Yer., 1985 **(In Russian)**.
 11. **Abeghan M.**, Yerker, vol., VII, Yer., 1975 **(In Armenian)**.
 12. **Lalayan Ye.**, Yerker, vol. I, Yer., 1983 **(In Armenian)**.
 13. “Bargirq hayoc”, Qnnakan bnagiry, arajabany yev tsanotagrutyunnery H. Amalyani, Yer., 1975 **(In Armenian)**.
 14. **Petrosyan S.**, Merdzsevyanyan tsegheri miutyuny Haykakan lernashkharhi hyusisarevelqum (m.t.a. VI-V dd.), “Patmabanasirakan hands”, Yer., 1976, N 1 **(In Armenian)**.
 15. **Karageozean Y.**, Haykakan lernashkharhy sepagir aghbyurnerum, I, 1, Sepagir teghanunner Ayraratum yev harakits nahangnerum, Yer., 1998 **(In Armenian)**.
 16. **Acharyan H.**, Liakatar qerakanutyun hayoc lezvi, vol. III, Yer., 1957 **(In Armenian)**.
 17. **Jahukyan G.**, Hayoc lezvi patmutyun. nakhgrayin zhamanakashrjan, Yer., 1987 **(In Armenian)**.
 18. **Acharyan H.**, Hayoc andznanneri bararan, vol. II, Yer., 1944 **(In Armenian)**.
 19. **Hakobyan T., Meliq-Bakhshyan S., Barseghyan H.**, Hayastani yev harakits shrjanneri teghanunneri bararan, vol. II, Yer., 1988 **(In Armenian)**.
 20. **Aslanyan A., Grgearyan H.**, Haykakan SSH ashkharhagrakan anunneri hamarot bararan, Yer., 1981 **(In Armenian)**.
 21. **Hmayakyan S.**, Vani tagavorutyun petakan krony, Yer., 1990 **(In Armenian)**.
 22. **Petrosyan S.**, Dasery yev eradasutyun drsevorumnery hin Hayastanum, Yer., 2006 **(In Armenian)**.
 23. **Srvandztyants G.**, Yerker, vol. I, Yer., 1978 **(In Armenian)**.
 24. **Petrosyan S.**, Geghami, Sisaki yev Veduri-Etiuni tseghakhmbi pashtamunqi masin, “Haykazuniner”, HH GAA, YePI, Yer., 2013 **(In Armenian)**.
 25. **Acharyan H.**, Hayeren armatakan bararan, vol. III, Yer., 1977 **(In Armenian)**.
 26. **Gamkrelidze T., Ivanov V.**, Indoyevropeyskiy yazik i indoyevropeytsi, vol. II, M., 1984 **(In Russian)**.
 27. “Nor bargirq haykazean lezui”, vol. I, Yer., 1979 **(In Armenian)**.
 28. “Hay zhoghovrdakan heqiatner”, vol. VI, Yer., 1973 **(In Armenian)**.
 29. **Petrosyan S.**, Patmakann u araspelabanakany Vardges Manuki avandazruytsun, HH GAA SHHH kentroni “Gitakan ashkhatutyunner”, vol. XV, Yer., 2013 **(In Armenian)**.
 30. **Jahukyan G.**, Hayereny yev hndyevropakan hin lezunery, Yer., 1970 **(In Armenian)**.
 31. **Georgiev V.**, Issledovaniya po sravnitelno-istoricheskomu yazikoznaniyu, M., 1958 **(In Russian)**.
 32. **Petrosyan S.**, Petrosyan Ts., Petrosyan L., “Jreri zavaki” pashtamunqi artatsolumy sepagrayin mi qani teghanunnerum, HH GAA SHHH kentroni “Git. ashkh.”, I, Gyumri, 1998 **(In Armenian)**.
 33. **Petrosyan S.**, Sarduri II-i andrsevanyan arshavanqi yertughu shurj, “PBH”, 1984, N 2 **(In Armenian)**.
 34. **Petrosyan S.**, Hay-shumerakan araspelabanakan aghersneri shurj, HH GAA SHHH kentroni “Git. ashkh.”, XIV, Yer., 2011 **(In Armenian)**.